**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/113**

ք. Երևան «12» 12 2025թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ի դեմս Ռեկտոր Հ. Ջաքոյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շին Լիդեր Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Ավանեսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և նրաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Հ. Պետրոսյանի անվան ՀԱՄ ԳԿ» մասնաճյուղի Իսակովի 24 հասցեում գտնվող վարչական շենքի երկրորդ հարկի հողերի մելիորացիայի լաբորատորիայի և գիտական գրադարանի շինարարական վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/113 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և նրաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) Նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման

համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 3,240,000.00 (երեք միլիոն երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, որից 540,000.00 (հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ ապահովել է շինարարության կազմակերպման նախագծով աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները (շինհրապարակի կազմակերպումը), որը պետք է գրավոր հավաստված լինի տվյալ օբյեկտի տեխնիկական հսկողությունն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության կողմից:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան հանձնման-ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| 1 | Կապալառուն չունի շինարարական նյութերի արդյունահանման թույլտվություն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1 տոկոսի չափով |
| 2 | Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1 տոկոսի չափով |
| 3 | Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 2 տոկոսի չափով |
| 4 | Գրունտի հանույթից առաջացած ավելցուկային նյութը և հողի վերին շերտը չեն տեղափոխվում և պահվում հատուկ նախատեսված վայրերում | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1 տոկոսի չափով |
| 5 | Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումը իրականացվում է միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված դեպքերում) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 6 | Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանկապատված և պաշտպանված չեն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 7 | Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 8 | Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսազդանշանային առկայծող լապտերներով և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1.5 տոկոսի չափով |
| 9 | Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |

| | | |
|---|---|---|
| 10 | Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 11 | Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցները | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 12 | Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 13 | Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 14 | Շինարարական նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 15 | Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք

կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս պահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալուօրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ | «Շին Լիդեր Գրուպ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 | Կոտայք, Մայակովսկի, Ամառանոցային 2փ. 19տ. |
| «Արդշինբանկ» ՓԲԸ | «Այդի Բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 2470100531030000 | ՀՀ 11803040239000 |
| ՀՎՀՀ 01507028 | ՀՎՀՀ 03580844 |
| Ռեկտոր՝ ------------------- Հ. Զաքոյան<br>(ստորագրություն) | Տնօրեն՝ ------------------- Կ. Ականաեսյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված N 1
«12» 12 2025 թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱԸԾՁԲ-25/113 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 45461100/15 | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Հ. Պետրոսյանի անվան ՀԱՄ ԳԿ» մասնաճյուղի Իսակովի 24 հասցեում գտնվող վարչական շենքի երկրորդ հարկի հողերի մելիորացիայի լաբորատորիայի շինարարական վերանորոգման աշխատանքների իրականացում, համաձայն՝ Հավելված 1.1-ի և գիտական գրադարանի շինարարական վերանորոգման աշխատանքների իրականացում, համաձայն՝ Հավելված 1.2-ի:<br>Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով: | դրամ | 3,240,000.00 | 1 | ՀՀ, ք.Երևան, Տերյան 74 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում: |
| Ընդամենը՝ | | | | 3,240,000.00 | | | |

*Աշխատանքի կատարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 30 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը,բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է աշխատանքը կատարել ավելի կարճ ժամկետում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470100531030000
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ ——————— Հ. Զաքոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Շին Լիդեր Գրուպ» ՍՊԸ
Կոտայք, Մայակովսկի, Ամառանոցային 2փ. 19տ.
«Այդի Բանկ» ՓԲԸ
ՀՀ 11803040239000
ՀՎՀՀ 03580844

Տնօրեն՝ ——————— Կ. Ավանեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 1.1
«12» 12 2025 թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/113 ծածկագրով պայմանագրի

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄ ԳՎ» ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ԻՍԱԿՈՎԻ 24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀՈՂԵՐԻ ՄԵԼԻՈՐԱՑԻԱՅԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Չ/մ | Քանակ | Միավորի արժեքը /ՀՀ դրամ/ | Ընդամենը արժեքը /ՀՀ դրամ/ | Տոկոսային կշիռը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | **Քանդման աշխատանքներ** | | | | | |
| 1. | Պատերի և առաստաղի հին ներկի մաքրում | մ² | 217 | 300 | 65100 | |
| 2. | Հատակի 18 մմ ԴՍՊ շերտի ապամոնտաժում | մ² | 63 | 800 | 50400 | |
| 3. | Հին շրիշակների ապամոնտաժում | մ | 49 | 200 | 9800 | |
| 4. | Լինոլիումի շերտի պոկում | մ | 63 | 700 | 44100 | |
| 5. | Գոյություն ունեցող լուսատուների դեմոնտաժ | հատ | 8 | 1000 | 8000 | |
| 6. | Միջսենյակային դռան ապամոնտաժում | հատ | 1 | 5000 | 5000 | |
| 7. | Առաջացած շին աղբի հավաքում և հեռացում բեռնատարով | մ³ | 6 | 9000 | 54000 | |
| | **Վերանորոգման աշխատանքներ** | | | | | |
| 8. | Մետաղապլաստե սպիտակ դռներ ապակե փաթեթով - տեղադրումով | մ² | 2 | 45000 | 90000 | |
| 9. | Դռան շեպերի գաջե սվաղ իրականացնել | մ | 10 | 2800 | 28000 | |
| 10. | Գոյություն ունեցող ջեռուցման խողովակների համար ակոսների իրականացում պատերի մեջ, շրիշակի վերևի մասում, խողովակների տեղադրում ակոսներում՝ ծգելով և ծածկում գաջե շաղախով | մ | 9 | 4200 | 37800 | |
| 11. | Ցինկապատ պրոֆիլների /գաջի անկյունակ/ տեղադրում պատի անկյուններում | մ | 45 | 500 | 22500 | |
| 12. | Պատերի և առաստաղի հարթեցում գիպսոնիտով | մ² | 45 | 2180 | 98100 | |
| 13. | Պատերի ծեփամածկում և երկշերտ ներկում լատեքսային լվացվող ներկով | մ² | 217 | 3450 | 748650 | |
| 14. | Հատակի ցեմենտ-ավազե հարթեցնող շերտի իրականացում մինչև 3 սմ հաստությամբ | մ² | 63 | 2800 | 176400 | |
| 15. | Հատակի սալիկապատում 60*60սմ պրեսգրանիտե սալերով /գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ/ | մ² | 63 | 10000 | 630000 | |
| 16. | Լվացարանների մասում պատի սալիկապատում | մ² | 5 | 9000 | 45000 | |
| 17. | ՊՎՔ շրիշակների տեղադրում 6սմ բարձրությամբ | մ | 49 | 850 | 41650 | |
| 18. | Գոյություն ունեցող ալյումինե պրոֆիլներով միջնապատի ներկում /գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ/ | մ² | 15 | 4000 | 60000 | |
| 19. | Միջնապատի ապակու փոխարինում | մ² | 6 | 12000 | 72000 | |
| 20. | Ապակիների թաղանթապատում անթափանց ինքնակպչուն թաղանթով | մ² | 9 | 15500 | 139500 | |
| 21. | Սարքերի մետաղական կաղապարների ներկում /գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ/ | մ² | 28 | 1800 | 50400 | |
| | **Էլեկտրամատակարարում** | | | | | |
| 22. | Պղնձե, բազմաջիղ մալուխ /2*1,5 մմ²/ անցկացնել պատերի մեջ նախօրոք արված ակոսներով և ծածկել գաջե շաղախով | մ | 85 | 900 | 76500 | |
| 23. | Պղնձե, բազմաջիղ մալուխ /3*2,5 մմ²/ անցկացնել պատերի մեջ նախօրոք արված ակոսներով և ծածկել գաջե շաղախով | մ | 130 | 1050 | 136500 | |
| 24. | Պղնձե, բազմաջիղ մալուխ /3*4.0 մմ²/ անցկացնել պատերի մեջ նախօրոք արված ակոսներով և ծածկել գաջե շաղախով | մ | 35 | 1200 | 42000 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 25. | Անջատիչ տեղադրել, միատակ փակ լարանցման համար, 220Վ IP 22, սպիտակ | հատ | 4 | 3100 | 12400 | |
| 26. | Երկբևեռ խրոցակային վարդակ տեղադրել, փակ լարանցման համար 10Ա, սպիտակ | հատ | 16 | 3050 | 48800 | |
| 27. | Շրջանակ 1 տեղանոց, սպիտակ | հատ | 10 | 150 | 1500 | |
| 28. | Շրջանակ 2 տեղանոց, սպիտակ | հատ | 4 | 250 | 1000 | |
| 29. | Լուսադիոդային լուսատու 32վտ IP 22, ձևը քառակուսի, 60*60 սմ, լույսի ջերմաստիճանը 4000 Կ | հատ | 5 | 11900 | 59500 | |
| 30. | Լուսադիոդային լուսատու 32վտ IP 22, ձևը ուղանկյուն, լույսի ջերմաստիճանը 4000 Կ | հատ | 3 | 11900 | 35700 | |
| 31. | Ավտոմատ անջատիչ 220Վ, 32 Ա - միացնելով | հատ | 6 | 4000 | 24000 | |
| 32. | Ավտոմատ անջատիչների ներկառուցվող տուփ՝ 6 տեղանոց - տեղադրումով | հատ | 1 | 3500 | 3500 | |
| | **Ջրամատակարարում և ջրահեռացում** | | | | | |
| 33. | Պոլիպրոպիլենային Φ25 խողովակների անցկացում, տաք ջրի համար | մ | 32 | 2700 | 86400 | |
| 34. | Պոլիպրոպիլենային Φ25 խողովակների ձևավոր մասեր | հատ | 12 | 150 | 1800 | |
| 35. | Գնդիկավոր փականներ Φ25 մետաղական | հատ | 4 | 4500 | 18000 | |
| 36. | Խողովակաշարի անցկացում ՊՎՔ խողովակներից Φ50մմ ռետինե սեղմիչ օղակներով, հիդրավլիկ փորձարկումով | մ | 15 | 3800 | 57000 | |
| 37. | ՊՎՔ խողովակների ձևավոր մասեր Φ50մմ - տեղադրումով | հատ | 12 | 500 | 6000 | |
| 38. | Կերամիկական լվացարան 60 սմ լայնքով – տեղադրումով /տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ/ | հատ | 2 | 28000 | 56000 | |
| 39. | Ծորակ սառը և տաք ջրի համար, քրոմագույն, չժանգոտվող մետաղից - տեղադրումով | հատ | 2 | 15000 | 30000 | |
| | **Ընդամենը՝** | | | | **3173000** | **100.00%** |

Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%

** Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470100531030000
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ ____________ Հ. Չաքրյան
(ստորագրություն)

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Շին Լիդեր Գրուպ» ՍՊԸ
Կոտայք, Մայակովսկի, Ամառանոցային 2փ. 19տ.
«Այդի Բանկ» ՓԲԸ
ՀՀ 11803040239000
ՀՎՀՀ 03580844

Տնօրեն՝ ____________ Կ. Ավանեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 1.2
«12» 12 2025 թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/113 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄ ԳԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԻՍԱԿՈՎԻ 24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Չ/մ | Քանակ | Միավորի արժեքը /ՀՀ դրամ/ | Ընդամենը արժեքը /ՀՀ դրամ/ | Տոկոսային կշիռը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | **Քանդման աշխատանքներ** | | | | | |
| 1. | Պատերի և առաստաղի հին ներկի մաքրում | մ² | 176 | 300 | 52800 | |
| 2. | Հին շրիշակների ապամոնտաժում | մ | 37 | 200 | 7400 | |
| 3. | Գոյություն ունեցող լուսատուների դեմոնտաժ | հատ | 6 | 1000 | 6000 | |
| 4. | Գոյություն ունեցող միջնորմի մեջ բացվածքի իրականացում՝ 120*160 սմ չափերով | հատ | 1 | 20000 | 20000 | |
| 5. | Առաջացած շին աղբի հավաքում և հեռացում բեռնաթափով | մ³ | 4 | 9000 | 36000 | |
| | **Վերանորոգման աշխատանքներ** | | | | | |
| 6. | Գոյություն ունեցող ջեռուցման խողովակների համար ակոսների իրականացում պատերի մեջ, շրիշակի վերևի մասում, խողովակների տեղադրում ակոսներում՝ ծգելով և ծածկում գաջե շաղախով | մ | 8.5 | 4200 | 35700 | |
| 7. | Ցինկապատ պրոֆիլների /գաջի անկյունակ/ տեղադրում պատի անկյուններում | մ | 45 | 500 | 22500 | |
| 8. | Պատերի և առաստաղի հարթեցում գիպսոնիտով | մ² | 45 | 2180 | 98100 | |
| 9. | Պատերի ծեփամածկում և երկշերտ ներկում լատեքսային լվացվող ներկով | մ² | 176 | 3900 | 686400 | |
| 10. | Մանրահատակի հղկում և եռաշերտ լաքապատում, ջրային լաքով | մ² | 49 | 4500 | 220500 | |
| 11. | ՊՎՔ շրիշակների տեղադրում 6սմ բարձրությամբ | մ | 49 | 850 | 41650 | |
| 12. | Մետաղական դարակաշարերի ներկում և տեղադրում | մ² | 55 | 3500 | 192500 | |
| 13. | Մետաղական դարակների փայտե տակդիրներ՝ չափսերը 50*20*3 սմ, հղկված, լաքապատ, առանց ճաքերի | մ³ | 1.44 | 215000 | 309600 | |
| | **Էլեկտրամատակարարում** | | | | | |
| 14. | Պղնձե, բազմաձյուղ մալուխ /2*1,5 մմ²/ անցկացնել պատերի մեջ նախորոք արված ակոսներով և ծածկել գաջե շաղախով | մ | 65 | 900 | 58500 | |
| 15. | Պղնձե, բազմաձյուղ մալուխ /3*2,5 մմ²/ անցկացնել պատերի մեջ նախորոք արված ակոսներով և ծածկել գաջե շաղախով | մ | 70 | 1050 | 73500 | |
| 16. | Պղնձե, բազմաձյուղ մալուխ /3*4.0 մմ²/ անցկացնել պատերի մեջ նախորոք արված ակոսներով և ծածկել գաջե շաղախով | մ | 20 | 1200 | 24000 | |
| 17. | Անջատիչ տեղադրել, միատակ փակ լարանցման համար, 220Վ IP 22, սպիտակ | հատ | 4 | 3100 | 12400 | |
| 18. | Երկբևեռ խրոցակային վարդակ տեղադրել, փակ լարանցման համար 10Ա, սպիտակ | հատ | 12 | 3050 | 36600 | |
| 19. | Շրջանակ 1 տեղանոց, սպիտակ | հատ | 7 | 150 | 1050 | |
| 20. | Շրջանակ 2 տեղանոց, սպիտակ | հատ | 4 | 250 | 1000 | |
| 21. | Լուսադիոդային լուսատու 32վտ IP 22, ձևը ուղղանկյուն, լույսի ջերմաստիճանը 4000 Կ | հատ | 3 | 11900 | 35700 | |
| 22. | Լույսի ռելսեր՝ տեղարել, նախատեսված արտաքին տեղադրման համար, գույնը՝ սև | մ | 12 | 5800 | 69600 | |
| 23. | Ռելսային լույսեր՝ 12 վտ հզորությամբ, շարժական - տեղադրումով | հատ | 24 | 6500 | 156000 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 24. | Ավտոմատ անջատիչ 220Վ, 25 Ա - միացնելով | հատ | 4 | 4000 | 16000 | |
| 25. | Ավտոմատ անջատիչների ներկառուցվող տուփ՝ 4 տեղանոց - տեղադրումով | հատ | 1 | 3500 | 3500 | |
| | **Ընդամենը՝** | | | | **2217000** | **100.00%** |

Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%

** Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470100531030000
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ ________________ Հ. Ջաքոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Շին Լիդեր Գրուպ» ՍՊԸ
Կոտայք, Մայակովսկի, Ամառանոցային 2փ. 19տ.
«Այդի Բանկ» ՓԲԸ
ՀՀ 11803040239000
ՀՎՀՀ 03580844

Տնօրեն՝ ________________ Գ. Ավանեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«12» 12 2025 թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/113 ծածկագրով պայմանագրի

## ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄ ԳԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԻՍԱԿՈՎԻ 24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀՈՂԵՐԻ ՄԵԼԻՈՐԱՑԻԱՅԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Շինարարական վերանորոգման աշխատանքներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | 30 օրացուցային օրվա ընթացքում |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | 30 օրացուցային օրվա ընթացքում |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470100531030000
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ ______________ Հ. Ջաքոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Շին Լիդեր Գրուպ» ՍՊԸ
Կոտայք, Մայակովսկի, Ամառանոցային 2փ. 19տ.
«Այդի Բանկ» ՓԲԸ
ՀՀ 11803040239000
ՀՎՀՀ 03580844

Տնօրեն՝ ______________ Կ. Ամանդյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«12» 12 2025թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/113 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Չափման միավորը | Ընդհանուր քանակը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025-2026թթ.՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | | | 2025թ. | 2026թ. | | | | | | | | | | | | Ընդամենը |
| | | | | | դեկտեմբեր | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 45461100/15 | Շինարարական վերանորոգման աշխատանքներ | դրամ | 1 | 3,240,000.00 | 3,240,000.00 | 3,240,000.00 | 3,240,000.00 | 3,240,000.00 | 3,240,000.00 | 3,240,000.00 | 3,240,000.00 | 3,240,000.00 | 3,240,000.00 | 3,240,000.00 | 3,240,000.00 | 3,240,000.00 | 3,240,000.00 |

* Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են ՀԱԱՀ հիմնադրամի հաստատված փոփոխված և ճշգրտված գնման պլանի համապատասխան անվանացանկով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470100531030000
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ __________ Հ. Ջաքոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Շին Լիդեր Գրուպ» ՍՊԸ
Կոտայք, Մայակովսկի, Ամառանոցային 2փ. 19տ.
«Այդի Բանկ» ՓԲԸ
ՀՀ 11803040239000
ՀՎՀՀ 03580844

Տնօրեն՝ __________ Կ. Ավանեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 4
«____» ________________ 20 թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/113 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
____________________________
____________________________
գտնվելու վայրը ____________
հհ ________________________
հվհհ ______________________

Պատվիրատու
____________________________
____________________________
գտնվելու վայրը ____________
հհ ________________________
հվհհ ______________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«     » «            » 20    թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     » «                    » 20     թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
____________________________
ստորագրություն
____________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
____________________________
ստորագրություն
____________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 4.1*
*«____» ________________ 20 թ. կնքված*
*ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/113 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________________-ի
Պատվիրատուի անունը                                        Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ________________________-ին կնքված N __________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                    պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված N 5*
*«____» ________________ 20 թ. կնքված*
*ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/113 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

__________ ֆինանսական գործակալի անվանումը _____ հայտնում է, որ.

1. _______ պատվիրատուի անվանումը ___-ի և __ կապալառուի անվանումը _____-ի միջև «-----» ___________ 20 թ. Կնքված «---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և
_____ կապալառուի անվանումը _____-ի միջև «-----» ___________ 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

_____________________________________________

_____________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.